01/10.1/2917-09
2009-05-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին հաղորդում ներկայացնելու ինստիտուտը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված չէ և այն «Դատախազության մասին» ուժը կորցրած օրենքից սոսկ ավանդաբար փոխանցվել ու ամրագրվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում։ Այն քննարկվել է նաև դատահիրավական բարեփոխումների հայեցակարգը մշակող միջգերատեսչական հանձնաժողովում և, կարծում ենք, որ չի հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, քանի որ խոսքը զուտ հաղորդում ներկա-

յացնելու մասին է, և չի խաթարում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված՝ դատախազության կարգավիճակի անկախությունը։

Նույնպիսի կարգավիճակ ունի նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը։ Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն անկախ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրներն ու գործառույթներն իրականացնելիս։ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անկախությունը հնարավորություն է ընձեռում նրան ազատ լինելու քաղաքական իրավիճակներից և ապահովելու գների կայունությունը, ընտրելու դրամավարկային քաղաքականության իրականացման առավել արդյունավետ գործիքներ։

Մինչդեռ, բոլորովին այլ կլինի իրավական գնահատականը, եթե Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հաղորդումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվետվության և դրամավարկային քաղաքականության ծրագիրը ներկայացնելը փոխարինվի քննարկմամբ։ Տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի և անգամ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ զուգահեռներ անցկացնելն իրավաչափ չէ, քանի որ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.4-րդ հոդվածի 3-րդ մասի և 89-րդ հոդվածի 2-րդ կետի, վերջիններս հաշվետու են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին։

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից անմիջապես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով հրաժարականի մասին դիմում ներկայացնելը ևս իրավաչափ չէ։ Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի 3-րդ մասի «Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին»։ Գլխավոր դատախազին

պաշտոնանկ անելու որևէ միջանկյալ դեպք նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, և գլխավոր դատախազի պաշտոնանկության ցանկացած այլ տարբերակ կհակասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։ Հետևաբար, գլխավոր դատախազը կարող է հրաժարականի մասին դիմում ներկայացնել ոչ թե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, այլ՝ Հանրապետության Նախագահին։ Գլխավոր դատախազի լիազորությունների դադարման հիմքերը սպառիչ են։

Նույն սկզբունքային առաջկությունները վերաբերում են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարմինների անկախության ինստիտուտը չի կարելի խոցելի դարձնել տարաբնույթ միջամտությամբ, այդ թվում՝ հաղորդումների քննարկման տեսքով, քանզի դրանով խաթարվում է անկախության բուն փիլիսոփայությունը։

Իրավական առումով՝

1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) վերնագրում «լրացումներ» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով.

2) 2-րդ հոդվածի՝

ա. 1-ին կետի համաձայն նոր խմբագրությամբ է շարադրվում միայն օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը, ուստի նախագծից անհրաժեշտ է հանել «Հոդված 52. Գլխավոր դատախազի լիազորությունների դադարումը» բառերը,

բ. 1-ին կետով նախատեսված 52-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետին,

գ. 2-րդ կետում պարզ չէ, թե գլխավոր դատախազն իր հրաժարականի մասին ինչ կարգով է «նախապես տեղեկացնելու» Հանրապետության Նախագահին,

դ. 2-րդ կետով նախատեսված «3-րդ մասի» կետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես, «ա» և «բ» տառերն անհրաժեշտ է փոխարինել «1)» և «2)» թվերով։

Միաժամանակ, նույն մասի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)։

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածի 2-րդ կետի և 4-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով.

2) 4-րդ հոդվածով նախատեսված «Հոդված 103»-ի 1-ին մասը կրկնում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի դրույթները, որոնք չեն բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներից։

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթների միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, 2-րդ մասում նշվում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը հաղորդումն «ստանալուց» հետո երկօրյա ժամկետում այն ուղարկում է մշտական հանձնաժողովներ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ հաղորդման քննարկումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստում սկսվում է այն «ներկայացվելուց» հետո։ Պարզ չէ հաղորդումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին ներկայացնելու կարգը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-572-17.03.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով (այսուհետ՝ Ազգային ժողով) եւ Հանրապետության Նախագահին է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին։ Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։»։

***Հոդված** 2.* Օրենքի 52-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 52. Գլխավոր դատախազի լիազորությունների դադարումը

1. Գլխավոր դատախազի լիազորությունները համարվում են դադարած, եթե՝

1) լրացել է նրա պաշտոնավարման ժամկետը.

2) նա տվել է հրաժարական սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով.

3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը։

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.Գլխավոր դատախազն իր հրաժարականի մասին գրավոր դիմումը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին՝ նախապես տեղեկացնելով Հանրապետության Նախագահին։ Ազգային ժողովի նիստը վարողը գլխավոր դատախազի հրաժարականը հրապարակում է Ազգային ժողովի չորսօրյա նիստերի առաջիկա նիստում։ Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ 3 օրվա ընթացքում, գլխավոր դատախազը գրավոր դիմումով՝

ա) հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նիստը վարողն առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին.

բ) հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա հրաժարականը համարվում է ընդունված։».

3) 3-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը Սահմանադրությամբ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին։»։

Հոդված *3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

Նախագիծ

Պ-572[1]-17.03.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ օրենք) 101-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունն Ազգային ժողովում քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե մինչեւ եզրափակիչ ելույթների ավարտը սույն օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված կարգով Վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծ չի ներկայացվում, կամ այն ներկայացվում է եւ չի ընդունվում, ապա հաշվետվության քննարկումն ավարտվում է եզրափակիչ ելույթներով՝ առանց որեւէ փաստաթուղթ ընդունելու:».

2) 4-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4^1 -րդ մասով.

«4^1 . Վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծը քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ եզրափակիչ ելույթներից անմիջապես հետո: Քննարկման ժամանակ հարակից զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունեն Վերահսկիչ պալատի նախագահը, ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եւ Կառավարության ներկայացուցիչները:»:

***Հոդված** 2.* Օրենքի 102-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի քննարկումն իրականացվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե մինչեւ Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթի ավարտը սույն օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված կարգով Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծ չի ներկայացվում, կամ այն ներկայացվում է եւ չի ընդունվում, ապա ծրագրի քննարկումն ավարտվում է ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական

հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցչի եւ Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթներով ՝ առանց որեւէ փաստաթուղթ ընդունելու։».

2) 5-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծը քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթից անմիջապես հետո։ Քննարկման ժամանակ հարակից զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունեն Կենտրոնական բանկի նախագահը, ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եւ Կառավարության ներկայացուցիչները։»։

Հոդված *3.* Օրենքի 103-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Կենտրոնական բանկի հաշվետվությունների քննարկումն իրականացվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով։ Եթե մինչեւ Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթի ավարտը սույն օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված կարգով Կենտրոնական բանկի հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծ չի ներկայացվում, կամ այն ներկայացվում է եւ չի ընդունվում, ապա հաշվետվության քննարկումն ավարտվում է եզրափակիչ ելույթներով՝ առանց որեւէ փաստաթուղթ ընդունելու։».

2) 5-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Կենտրոնական բանկի հաշվետվությունների վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձների կամ հայտարարությունների նախագծերը քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախագահի եզրափակիչ ելույթից անմիջապես հետո։ Քննարկման ժամանակ հարակից զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունեն Կենտրոնական բանկի նախագահը, ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եւ Կառավարության ներկայացուցիչները։ Ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ուղարկված հաշվետվությանը կցված Կենտրոնական

բանկի նախորդ տարվա տարեկան ֆինանսական հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագծի քննարկման ժամանակ հարակից զեկուցումով կարող է ելույթ ունենալ նաեւ Վերահսկիչ պալատի նախագահը։»։

Հոդված 4. Օրենքը 103-րդ հոդվածից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 103^1 -րդ հոդվածով.

Հոդված 103^1 . Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման ներկայացումը եւ քննարկումը

1. Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ մարտի 1-ը Ազգային ժողով եւ Հանրապետության Նախագահին է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին։

2. Ազգային ժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդումը ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, այն ուղարկում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ։

3. Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հողորդման քննարկումն Ազգային ժողովի նիստում սկսվում է ներկայացվելուց հետո՝ Ազգային ժողովի առաջիկա չորսօրյա նիստերում։

4. Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդումը հրապարակելու համար Գլխավոր դատախազին տրվում է մինչեւ 40 րոպե։

5. Մինչեւ 20-ական րոպե տեւողությամբ հարակից զեկուցումներով ելույթ են ունենում մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները։

6. Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման քննարկումն իրականացվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով։ Եթե մինչեւ Գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթի ավարտը սույն օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծ չի ներկայացվում, կամ այն

ներկայացվում է եւ չի ընդունվում, ապա հաղորդման քննարկումն ավարտվում է մշտական հանձնաժողովների ներկայացուցիչների եւ Գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթներով ՝ առանց որեւէ փաստաթուղթ ընդունելու։

7. Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման վերաբերյալ Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարության նախագիծը քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթից անմիջապես հետո։ Քննարկման ժամանակ հարակից զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունեն Գլխավոր դատախազը եւ մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները։

8. Ազգային ժողովում քննարկվելուց հետո Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդումը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ տեղադրվում Հայաստանի Հանրապետության դատախազության էլեկտրոնային կայքում։»։

Հոդված *5.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1) վերացնել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրեքնի 59-րդ հոդվածների հակասությունը, սահմանել է Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների ներկայացման կոնկրետ ժամկետ (հոդված 1)։

Համաձայն ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի ՀՀ գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը: Դա մասնավորապես ենթադրում է Հայաստանի Հանրապետության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների քննարկումն Ազգային ժողովում, որը մեծապես կարող է նպաստել ՀՀ դատախազության գործունեության հրապարակայնության ապահովմանը եւ Ազգային ժողովի՝ որպես Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի վերահսկողական գործառույթների իրականացմանը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ՀՀ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով եւ Հանրապետության Նախագահին է ներկայացնում հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն օրենքով նախատեսված դեպքերում հաշվետվությունները, ծրագրերը եւ հաղորդումներն Ազգային ժողովի նիստում քննարկվում են հատուկ ընթացակարգով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով: Այդպիսով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի միջեւ ներկայումս առկա է հակասություն, որը խոչընդոտում է Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումների քննարկմանը: Բացի այդ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման ներկայացման հստակ ժամկետ նախատեսված չէ:

Նշված հակասությունները վերացնելու նպատակով առաջարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը լրացնել նոր՝ 103.1-րդ հոդվածով, դրանում շարադրելով Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդումն Ազգային ժողովում քննարկելու հատուկ կարգը՝ համապատասխան փոփոխությունները կատարելով նաեւ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում:

Նշված կարգով նախատեսվում է նաեւ, որ պատգամավորների առնվազն մեկ երրորդը կարող են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերով սահմանված կարգով հաղորդման վերաբերյալ ներկայացնել ուղերձի կամ հայտարարության նախագիծ, որը քննարկվում է ՀՀ գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթից անմիջապես հետո: Այս կարգի սահմանման դեպքում Ազգային ժողովն կարող է

Սահմանադրության 62-րդ հոդվածի երկրորդ մասով եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 104.1-րդ հոդվածներով իրեն վերապաված լիազորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության դատախազության տարեկան գործունեության մասին հաղորդման հիման վրա գնահատել Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեությունը: Թեեւ նման ձեւով տրված Ազգային ժողովի գնահատականը ուղղակի իրավական հետեւանք չունի, սակայն կարող է կարեւոր ազդակ հանդիսանալ համապատասխան մարմինների եւ պաշտոնատար անձանց հետագա գործունեության համար:

Ազգային ժողովի ուղերձի կամ հայտարարութայն նախագծի ներկայացման նմանատիպ մեխանիզմներ են ավելացվել նաեւ Ազգային ժողովում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվության, կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրի, կենտրոնական բանկի հաշվետվությունների քննարկման կարգերում:

2) հստակեցնել է ՀՀ գլխավորի դատախազի հրաժարականի ներկայացման եւ ընդունման կարգը՝ այն համապտասխանեցնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքին:

Համաձայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունները դադարում են մասնավորապես, երբ նա պաշտոնից ազատվելու դիմում է ներկայացրել Հանրապետության Նախագահին: Մինչդեռ, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի (պաշտոնում ընտրելու, նշանակելու, պաշտոնատար անձի հրաժարականի եւ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կամ պաշտոնանկության մասին հարցերի քննարկումը) 6-րդ մասի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձն իր հրաժարականի մասին գրավոր դիմումը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որի մասին նիստը վարողը հրապարակում է չորսօրյա նիստերի առաջիկա նիստում: Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ 3 օրվա ընթացքում, տվյալ անձը գրավոր դիմումով՝

ա) հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նիստը վարողն առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին.

բ) հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա հրաժարականը համարվում է ընդունված:

Մեր կարծիքով, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում սահմանված կարգն առավելագույնս է համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ըստ այդ կարգի ՀՀ գլխավոր դատախազն իր հրաժարականը ներկայացնում իրեն նշանակող մարմնին՝ Ազգային ժողովին։

Հատկանշական է, որ համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի վերահսկիչ պալատի նախագահը, որը նույնպես նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ, իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին։ Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝ կամովին պաշտոնից ազատվելու դեպքում կենտրոնական բանկի նախագահը նախապես տեղեկացնում է Հանրապետության Նախագահին եւ Ազգային ժողովին։ Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մարդու իրավունքների պաշտպանը նույնպես իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողովին։